Խաղաղության ՀԱՄԱՐ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ՝ ԸՆԴԴԵՄ ՆԵՅՏՐՈՆԱՅԻՆ ՌՈՒՄԲԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ

Ս/թ. դեկտեմբերի 14-ին ռուս պրավոսլավ եկեղեցու Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի հրավերով Մոսկվայի մոտ գտնվող ռուսական Զագորսկ վանքում տեղի ունեցավ Սովետական Միության եկեղեցիների և կրոնական այլ համայնքների ներկայացուցիչների ժողով՝ ընդդեմ նեյտրոնային ռումբի արտադրության ու գործադրման:

Դեկտեմբերի 10-ին Հայոց Հայրապետը Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքից ստացավ հետևյալ բովանդակությամբ հեռագիրը.

«Սիրելյալ և թանկագին Եղբայր, Ձեզ անկասկած հայտնի է Եվրոպայում և համայն աշխարհում գոյություն ունեցող այն մեծ սպառնալիքը, որը ներկա ժամանակներում բխում է առաջին հերթին Արևմտյան Եվրոպայում մասսայական բնաջնջման նոր զենքի՝ նեյտրոնային ռումբի արտադրությամբ և տարածումով: Կարծում ենք, որ այսպիսի մի պատասխանատու ժամանակ, առավել քան երբեք, ճիշտ ժամանակն է և արդյունավետ, որ մենք՝ ՍՍՀՄ-ի եկեղեցիների և կրոնական համայնքների գլխավորներս, հավաքվենք և մշակենք մի կոչ՝ ուղղված համաշխարհային կրոնական հասարակայնությանը՝ դիմադրելու այդ անմարդկային ծրագրերին:

Եղբայրաբար հրավիրում ենք Ձեզ մասնակցելու դեկտեմբերի 14-ին Զագորսկի ս. Երրորդություն-Սերգիևյան մայրավանքում տեղի ունենալիք խորհրդակցությանը»:

Ընդառաջելով Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի եղբայրական հրավերին և առաջնորդված խաղաղասիրական ջերմ սիրով, Վեհափառ Հայրապետը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի ուղեկցությամբ, դեկտեմբերի 13-ին մեկնում է Մոսկվա՝ մասնակցելու հիշյալ կրոնական գործիչների համագումարին:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհում են Մայր Աթոռի միաբանները: Նորին Սրբությանը բարի ճանապարհ է մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. Անդրանիկ Հասրաթյանը:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետը ժամանում է Մոսկվա: Դոմոդեդովոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում են Մոսկվայի և Համայն Ռուսիո Պիմեն Պատրիարքը Իր շքախմբով ու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի առաջնորդական տեղապահ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 14-ին, առավոտյան ժամը 11-ին, Զագորսկի ս. Երրորդություն-Սերգիևյան մայրավանքում տեղի է ունենում խաղաղության պաշտպանությանը նվիրված կրոնական գործիչների համագումարի հանդիսավոր բացումը:

Համագումարը բացվում է Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Պիմենի խոսքով, որը և բացատրում է համագումարի հրավիրման կարևորությունը և նրա առաջ դրված հարցերը:

Ապա ելույթ է ունենում Ամենայն Հայոց Հայրապետը.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Սիրեցյալ Եղբայրներ Մեր,

Այնպիսի մի նվիրական պահի, երբ մենք բոլոր քրիստոնյաներս հոգեպես պատրաստվում ենք վերստին ընդունելու ավետիսը՝ Խաղաղության Իշխանի՝ մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի հրաշալի Ծննդյան, անհա դժբախտությունը ունենք տեղեկանալու, թե պատրաստություններ են կատարվում Արևմտյան Եվրոպայի որոշ երկրներում տեղադրելու նեյտրոնյան ռումբերի սարձակման կայաններ: Անհավատալի թվացող այս չարաղետ լուրը ավաղ ճշմարիտ է: Մենք հոգևորականներս, քրիստոնյաներ և տարբեր կրոնների ներկայացուցիչներ Սովետական Միության հանրապետություններից, հաճախ հանդիպել ենք այստեղ Զագորսկ սուրբ քաղաքում հրավերովը ռուսաց մեծ եկեղեցու Սրբազան Պատրիարքի, միատեղ աղոթելու և միասին գործելու վասն միջազգային խաղաղության և վասն պետությունների ընդհանուր զինաթափության, ապահովելու երջանիկ ապագա՝ թե՛ մեր սովետական ժողովուրդների և ամբողջ երկրագնդի ազգությունների համար: Եվ շատ անգամ մեր աղոթքներին և խաղաղասիրական աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել աշխարհի բոլոր քրիստոնեական եկեղեցիները և այլ կրոնների ներկայացուցիչներ, միևնույն ոգով, միևնույն նպատակով:

Բայց այժմ Մեզ համար զարհուրելի է հաստատել, թե լսելի չեն լինում ավաղ ոչ եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների, ոչ էլ աշխարհի ժողովուրդների խոնարհ զանգվածների ու բոլոր բարի կամքի տեր մարդկանց խաղաղության կոչերը:

Ահա թե ինչու մենք բոլորս վերստին հավաքվել ենք այստեղ սուրբ Հոգով լցված, մեր բոլորիս միահամուռ հզոր խոսքով արթնացնելու խիղճը մարդկության, և բողոքելու նեյտրոնյան ռումբերի պատրաստման ու Եվրոպայում գետեղման դժոխային ծրագրի դեմ: Մենք նկատում ենք այդ մեր հոգևոր սեպուհ պարտականությունը հպատակվելու խաղաղության երկնառաք պատգամին, հանուն Եվրոպայի ժողովուրդների, հանուն մեր սովետական ժողովուրդների և համայն մարդկության կյանքի անվտանգության ու քաղաքակրթության փրկության:

Մենք, հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և մեր հավատացյալ ժողովրդի ձեր բոլորի կողքին ենք՝ թե՛ մեր աղոթքներով և թե՛ մեր կենդանի խոսքով ու գործով, մեր անվերապահ մասնակցությունը բերելու համաշխարհային մարդասիրական շարժման՝ արգիլելու համար նեյտրոնյան ռումբերի տեղադրումը Եվրոպայի ցամաքամասի վրա, Արևմուտքում և արգիլելու համար առհասարակ դրանց պատրաստումը:

Մենք հավատում ենք, թե արդար է մեր բողոքը, արդար է մեր պահանջը: Եվ հավատում ենք նաև, թե աշխարհի բոլոր երկրներից Աստված պաշտող բոլոր հավատացյալները և բարի կամքի տեր միլիոնավոր մարդիկ իրենց բողոքի ձայնը պիտի բարձրացնեն նույն արդար պահանջով:

Մենք նույնպես հավատում ենք, թե Խաղաղության Իշխանը՝ Հիսուս, կլսի բոլորիս աղերսանքը և մարտակից կհանդիսանա մեզ բոլորիս, աշխարհի խաղաղասեր մարդկանց ու ազգություններին, վերջնապես հաստատելու համար՝ Իր իսկ ավետած պատգամը՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Տեր Աստված ամենակալ, տուր աշխարհիս խաղաղություն, մարդկանց բոլոր՝ սեր, միություն:

Ընդմիջումից հետո տեղի են ունենում համագումարի Բ և Գ նիստերը, որոնց ընթացքում խաղաղության պաշտպանությանը նվիրված ջերմ խոսքով հանդես են գալիս ՍՍՀՄ-ում գոյություն ունեցող շուրջ 24 եկեղեցիների և կրոնական այլ համայնքների ներկայացուցիչներ:

Համագումարի Գ նիստի վերջում ընդունվում է մի ուղերձ-կոչ՝ ուղղված համայն աշխարհի հավատացյալ հասարակայնությանը՝ դատապարտելու համար նեյտրոնային ռումբի արտադրումն ու նրա տեղադրումը Արևմտյան Եվրոպայում: Կոչում ասվում էր.

ՈՒՂԵՐՁ-ԿՈՉ
ԿՐՈՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ

Մենք՝ Սովետական Միության եկեղեցիների և կրոնական համայնքների ղեկավարների և ներկայացուցիչների ժողովի մասնակիցներս, դավանողներ բուդդայական, հրեական, մահմեդական և քրիստոնեական կրոնների, ռուս պրավոսլավ եկեղեցու Հովվապետի՝ Մոսկվայի և համայն Ռուսիոյ Պատրիարքի նախագահությամբ 1977 թ. դեկտեմբերի 14-ին հավաքվել ենք Մոսկվայի մոտ գտնվող Զագորսկ քաղաքի ս. Երրորդություն-Սերգիևյան մայրավանքում, որպեսզի մարդկության հանդեպ ունեցած մեր կրոնական պատասխանատվության գիտակցությամբ և աշխարհի վրա գոյություն ունեցող կյանքի բոլոր դրսևորումների հանդեպ ունեցած մեր սրբազան հարգանքի լույսի տակ արտահայտենք մեր և աշխարհի բնաջնջման նոր զենքի՝

նեյտրոնային ռումբի թողարկման և Արևմտյան Եվրոպայի երկրների տերիտորիայում այն տեղադրելու ծրագրերի դեմ միահամուռ կերպով բողոքող հավատացյալ քաղաքացիների համոզմունքն ու կամքը:

Թանկագին եղբայրներ և քույրեր, մենք դիմում ենք ձեզ սրտագին եղբայրական ողջույնով և կոչում ենք ձեզ, հանուն սրբազան պարգևի՝ կյանքի պահպանման, նեյտրոնային վտանգը կանխելու համար համատեղ ջանքերի:

Նեյտրոնային ռումբը, որ օժտված է իր գործողության սահմաններում ամեն մի կենդանի բան ոչնչացնելու ուժով, ներառյալ գալիք սերունդների ծննդաբերության վտանգը, համարվում է պատերազմ վարելու ամենասարսափելի միջոցներից մեկը:

Այդ զենքը միջազգային անվտանգությունն առավել կերպով չի պահպանում, ինչպես այդ բանում փորձում են համոզել համաշխարհային հասարակությանը նրա կողմնակիցները: Ընդհակառակը, նեյտրոնային ռումբի բացառիկ վտանգը կայանում է նրանում, որ այն կարճացնում է սովորական և միջուկային զենքերի միջև եղող տարածությունը և, գրգռիչ ու ապակայունացնող դեր կատարելով նույնիսկ փոքրիկ տարաձայնությունների դեպքում, է՛լ ավելի հավանական է դարձնում ու մոտեցնում միջազգային պատերազմի ծագման վտանգը:

Իրապես բազմազան են նեյտրոնային ռումբի գործադրման սարսափեցնող հետևանքները: Սակայն խաղաղ պայմանների մեջ անգամ նրա ստեղծման փաստը սպառազինությունների մրցավազքի և մասսայական բնաջնջման զենքի կատարելագործման համար մեծ խթան է հանդիսանում: Նեյտրոնային զենքի արտադրման համար կատարված հսկայական ծախսերն առավել ևս կկրճատեն մարդկային կենսական այնպիսի հարցերի լուծումը, ինչպիսիք են նոր զարգացող երկրներին օգնություն ցույց տալը, երկրի սովահար բնակչության զանգվածների կերակրումը, թշվառությունից և համաճարակ հիվանդություններից նրանց փրկելն ու էներգիայի նորանոր աղբյուրների մշակումը:

Այնպիսի մի ժամանակ, երբ համայն մարդկությունը այժմ լի է ինքնաոչնչացման կանխահայտ վտանգից ազատվելու ձգտումով, նեյտրոնային զենքի ջատագովներն անում են ամեն մի հնարավոր բան, որպեսզի հասնեն նրա շուտափույթ թողարկմանն ու Արևմտյան Եվրոպայի երկրներում այն տեղադրելուն: Դրանով նրանք վիժեցնում են Եվրոպայում ներկայումս կատարվող լարվածության թուլացման ընթացքն ու Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության արդյունքների հուսադրիչ հետևանքները՝ առավել զորացնելով նոր, համաշխարհային պատերազմի հավանականությունը:

Սովետական ժողովրդի բանականությունը, զգացումն ու կամքը ընդվզում են մարդկության դեմ պատրաստվող այս նոր հանցագործության համար: Մենք քաջ գիտենք պատերազմի արժեքը: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մեր հայրենիքը տվեց մոտ քսան միլիոն մարդկային զոհ, և մեր հայրենակիցների արյունը դիմում է մեր խղճին՝ պարտավորեցնելով թույլ չտալ համաշխարհային աղետի կրկնումը:

Մենք համոզված ենք, որ այլ դիրքորոշում չի կարող լինել: Նեյտրոնային վտանգը առնչվում է ժողովուրդների, ողջ մարդկային ընտանիքների հետ:

Մենք ողջունում ենք Միավորված ազգերի կազմակերպության վերջին նստաշրջանի՝ մասսայական բնաջնջման զենքի նոր տեսակների արտադրու-

թյան դեմ առնված որոշումը: Այն նեյտրոնային զենքի դեմ մեր հանդես գալուն մեծ ուժ է հաղորդում, և մենք հավատում ենք, որ այն կմոտեցնի նրա արգելման ժամը:

Որպես կրոնական գործիչներ մենք մեր պարտքն ենք համարում նախազգուշացնելու քաղաքական այն գործիչներին, որոնք իրենք իրենց հավատացյալ են համարում, սակայն միաժամանակ սրբապղծորեն արդարացնում են նեյտրոնային զենքը՝ կոչելով այն «մարդասիրական», նախազգուշացնել նրանց խորապես իրենց սխալ դիրքորոշման մասին, որ իր ետևից կարող է ողբերգական հետևանքներ բերել:

Անհրաժեշտ ենք համարում այդպիսի մարդկանց շրջապատել բարոյական ճնշման և դատապարտման մթնոլորտով:

Մենք հիշեցնում ենք բոլոր քաղաքական գործիչներին, որ նրանց ունեցած իշխանությունը պարտավորություն է դնում նրանց վրա աշխարհի ներկայի և ապագայի հանդեպ: Նրանք պարտավոր են հաշվի նստել համաշխարհային հասարակայնության կարծիքի հետ, որը մերժում է նեյտրոնային ռումբը:

Եղբայրական ջերմ կոչով մենք դիմում ենք համայն աշխարհի կրոնական գործիչներին և հավատացյալներին, որպեսզի նրանք մասնայական բնաջնջման այս նոր զենքի դեմ անտարբեր լռություն չպահպանեն և չեզոք դիրք բռնեն՝ դրանով իսկ կամա թե ակամա նպաստեն զինվորական կոնֆրոնտացիայի քաղաքականությանը:

Մենք համոզված ենք, որ մեր ջանքերը ճիշտ ժամանակին են կատարվում և համոզված ենք նրանց կենսական անհրաժեշտությանը: Դա առավել ակնհայտ է նրանով, որ մեր օրերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրն իրապես հասցվել է համաշխարհային մակարդակի, իսկ նեյտրոնային զենքի հարցում շոշափվում է մարդկային անձնավորության առաջին և հիմնական իրավունքը՝ ապրելու իրավունքը:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք հավատում ենք, որ դուք կբաժանեք մեր մտահոգությունը և կմիացնեք ձեր ջանքերը ձեր աշխատանքներին, որ բարի կամքի տեր մարդկանց միահամուռ ջանքերով մարդկությունը կազատվի գալիք վտանգից: Մենք աղոթում ենք մեր աշխատանքների հաջողության համար, հավատում ենք, որ մեր միահամուռ ձգտումները կհաղթահարեն մահվան զենքի այս նոր կատարելագործված տեսակը:

Հասնենք այն բանին, որ նեյտրոնային ռումբը հայտարարվի օրենքից դուրս:

Համայն աշխարհի վրա թող հաղթանակի խաղաղությունը:

1.—Հայ առաքելական եկեղեցու անունից՝ Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա:
2.—Ավետարանական-բապտիստական համամիութենական խորհրդից՝ գլխավոր քարտուղար Ա. Մ. ԲԻՉԿՈՎ:
3.—Վրացական պրավոսլավ եկեղեցուց՝ Սուխումիի և Աբխազիայի առաջնորդ, վրաց եկեղեցու կաթողիկոսական տեղապահ ԻԼԻԱ:
4.—ՍՍՀՄ բուդդայականների հոգևոր վարչությունից՝ վարչության նախագահ ԲԱՆԴԻԴՈ ՀԱՄԲՈ ԼԱՄԱ ԳՈՄԲՈԵՎ ԺԱՄԲԱԼ ԴՈՐԺԻ:
5.—Միջին Ասիայի և Ղազախստանի մահմեդականների հոգևոր վարչությունից՝ վարչության նախագահ մուֆտի ԶԻՅԱՈՒԴԻՆ ԽԱՆ ԻԲՆ ԻԾԱՆ ԲԱԲԱԽԱՆ:

6.—Անդրկովկասի մահմեդականների հոգևոր վարչությունից՝ վարչության նախագահի տեղակալ մուֆտի ԻՍՄԱՅԻԼ ԱՀՄԵԴՈՎ:
7.—Հյուսիսային Կովկասի մահմեդականների հոգևոր վարչությունից՝ վարչության նախագահ մուֆտի ԱԲԴՈՒԼՀԱՖԻԶ ՕՄԱՐՈՎ:
8.—ՍՍՀՄ-ի եվրոպական մասի և Սիբիրի մահմեդականների հոգևոր վարչությունից՝ վարչության նախագահ մուֆտի ԱԲԴՈՒԼԲԱՐԻ ԻՍԱԵՎ:
9.—Լատվիական ՍՍՀ ավետարանա-լութերական եկեղեցուց՝ արքեպիսկոպոս, դոկտոր ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍ:
10.—Էստոնական ՍՍՀ ավետարանա-լութերական եկեղեցուց՝ արքեպիսկոպոսի պաշտոնակատար ԷԴՈՒԱՐԴ ԽԱՐԿ:
11.—Լիտվական ՍՍՀ ավետարանա-լութերական եկեղեցուց՝ ԻՈՆԱՍ ԿԱԼՎԱՆԱՍ:
12.—Հրեական համայնքից՝ Մոսկվայի սինագոգի ռաբբի Յ. Լ. ՖԻՇՄԱՆ.
Ռիգայի սինագոգի ռաբբի Գ. Մ. ԳՈՒՐԵՎԻՉ.
Կիևի սինագոգի ռաբբի Ա. Բ. ԺԻԴՈՎԵՑԿԻ.
Լենինգրադի սինագոգի ռաբբի Կ. Ա. ՊԼՈՏԿԻՆ:
13.—Էստոնիայի մեթոդական եկեղեցուց՝ վերատեսուչ ՀՈՒԳՈ ԷՆԳՈ ՕԵՆԳՈ:
14.—Շաբաթապահների (ադվենտիստների) կրոնական համայնքից՝ ՌՍՖՍՀ-ի համայնքի ավագ քարոզիչ Մ. Պ. ԿՈՒԼԱԿՈՎ:
15. Անդրկարպատների բարեհորոգչական եկեղեցուց՝ եպիսկոպոսի տեղակալ պաստոր ՊԱՎԵԼ ՖՈՐԳՈՆ:
16.—Լատվիական ՍՍՀ կաթոլիկ եկեղեցուց՝ ՎԱԼԵՐԻԱՆ ԵՊՍ. ԶՈՆԴԱԿՍ:
17.—Լիտվական ՍՍՀ կաթոլիկ եկեղեցուց՝ եպիսկոպոս ԼՅՈՒԴՎԻԿՈՍ ՊԱՎԻԼՈՆԻՍ:
18.—Ռուս պրավոսլավ եկեղեցուց՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք ՊԻՄԵՆ:
19.—Հին պրավոսլավ հնաոեսյան եկեղեցուց՝ Մոսկվայի և համայն Ռուսիո արքեպիսկոպոսի քարտուղար, քահանա ԳԵՈՐԳԻ ՈՒՍՏԻՆՈՎ:

Համագումարի ավարտից հետո Զագորսկի հոգևոր ճեմարանում ներկաների համար ցուցադրվում է «Հանուն խաղաղության» վավերագրական շարժապատկերը՝ նվիրված 1977 թվականին Մոսկվայում կայացած «Կրոնական գործիչները հանուն կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների» հունիսյան հանդիպմանը: Ապա տեղի հոգևոր ճեմարանի ուսանողության ուժերով տրվում է հոգևոր համերգ:

Նույն օրը համագումարի մասնակիցները վերադառնում են Մոսկվա:

Դեկտեմբերի 15-ին, հինգշաբթի օրը, ժամը 14-ին, Մոսկվայի «Սովետսկայա» հյուրանոցում Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի կողմից տրվում է հրաժեշտի ճաշկերույթ:

Դեկտեմբերի 16-ին Հայոց Հայրապետը և տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքից հրաժեշտ առնելով, վերադառնում են Մայր Աթոռ:

«Զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան, եւ աւետարանչացն բարութեան» (Հռոմ. Ժ 15):

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ԱՐԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ